

ԿԱՅԱՑԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

22.01.2024 16:01



ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 2024թ. հունվարի 10-ի որոշմամբ՝ 2023 թվականին արտոնագիր ստացած փաստաբաններ Դավիթ Թովմասյանը և Եղեգնի Բաբայանը համալրել են պալատի Երիտասարդական խորհուրդը:

2024 թվականի հունվարի 18-ին կայացել է Երիտասարդական խորհրդի նիստ, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը խորհրդի նորանշանակ անդամները:

Նիստին ներկայացվել են Պալատի պատկերացումները և ակնկալիքները խորհրդի առաջիկա գործունեության առնչությամբ:

Այնուհետև Երիտասարդական խորհրդի անդամները քննարկել են գործունեության հիմնական ուղղությունները, կազմել առաջիկայում կատարվելիք աշխատանքների ծրագիրը:

Հիշեցնենք, որ Երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի խնդիրներից է, ի թիվս այլնի, աջակցել Երիտասարդ փաստաբաններին՝ մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացում, վեր հանել Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, ներկայացնել Պալատին և աջակցել դրանց լուծմանը:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })